

ՀԱՄԱՌՈՑ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ա. Հ. Մուրադյան, Ն. Գ. Սարուխանյան

ԿՏԱՎԱՏԻ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

«Անասնաբուծությունից զարգացման անբարենաջող դրույթները բացառվում է ամենից առաջ կերի արտադրությունից և հայթայթման ետ ֆուկով...», «Անհրաժեշտ է ապահովել բավարար քանակությամբ լավորակ խոտի, հյութալի կերերի և զգալի քանակությամբ խտացրած կերերի սեփական արտադրությունը» (ՄԱԿՊ Կենտկոմի Սեպտեմբերյան պլենումի որոշումները)։

Մեծ է Սուրալայան արոտների և խոտհարքների նշանակությունը անասնաբուծության զարգացման և մթերատվության բարձրացման գործում։ Այդ տիպի արոտների հիմնական բարելավման համար առաջին, երբեմն երկրորդ տարին ճամշերտը զրադեցնում են որևէ պլանտացիոն կուլտուրայով՝ ինչպես, օրինակ՝ կարծր ցորենը, տարեկանը, կտավատն ու զարին։

Ենելով Ի. Վ. Միշուրինի և Ռ. Վ. Վիլյամսի ուսմունքից և անասնաբուծության ասպարեզի մի շարք առաջավորների փորձի տվյալներից, մեզ մոտ ևս հնարավոր է կտավատի բարձր և կայուն բերք ստանալ։ Ուստի ժամանակն է լեռնային շրջաններում անցնել մարգագետնա-արոտային ցանքաշրջանառությունների կիրառման, որոնք հնարավորություն կտան լայնորեն ծավալել կտավատացանությունը։ Այդ շրջաններում կան մեծ տարածություններով հարթ արոտներ և խոտհարքներ, որոնց բերքը չնչին է։ Նրանց հիմնական բարելավումը պետք է սկսել կտավատացանությունից, զրադեցնելով մեկ-երկու տարի կտավատի ցանքերով, որից հետո հողատեսքը տալ բազմամյա խոտարույսերի խոտախառնուրդի տակ։

Սույն ուղիստությունից մեջ մենք նպատակ ենք դնում հաղորդելու կտավատի մշակության ասպարեզում մեր կատարած ուսումնասիրությունների արդյունքները։ Այդ հարցը լուծելու համար մենք կտավատի փորձնական ցանք ենք կատարել Սիսիանի շրջանի Բազարչայ գյուղի Ստալինի անվան կոլտոզի դաշտերում՝ 2650 մետր բարձրության վրա։

Փորձի մեթոդիկան հետևյալն է։ 6000 քմ տարածության վրա ցանել ենք բազմամյա խոտարույսերի խառնուրդ, յուղատու կտավատի ծածկողով, Յանքը կատարել ենք վաղ գարնանը՝ 1951 թ. ապրիլի 12-ին, 1952 թվականի մայիսի 5-ին։ Յանքի նորման մեկ հեկտարին 59 կգ։ Ցանված է տափակ և մեթեմոսի կտավատի խառնուրդ՝ ուշահաս տեղական պոպուլյացիա։ Ցանքից հետո երկու երես փոցիել ենք, վեգետացիայի ընթացքում մեկ անգամ էլ քաղհանել։ Յանքը կատարված է լավ սեահողերում,

որոնք բերրիություն մեծ պատենցյալ հնարավորություն ունեն, հողի հզորությունը հասնում էր մինչև 75 սմ, ռեակցիան չեզոք էր, $\text{Ph}-6, 9, 7, \text{I}$ ոչ կարրոնատային, ազոտը վարելաչեղում կազմում էր $0,15 \frac{1}{10}$, իսկ հումուսը $7,4-8 \frac{1}{10}$: $0,01$ մմ-ից փոքր տրամագրի ունեցող մասնիկների քանակը կազմում էր $59,2 \frac{1}{10}$, K_2O -ի քանակը 100 գր հողում 25 մգ (Պեյզեի մեթոդ), P_2O_5 -ի քանակը 100 գր հողում՝ 23 մգ (Կիրսանովի մեթոդ):

Այդ հողերը մեծ մասամբ անպեպ են, նույնիսկ, որպես ոչխարի արոտներ, որովհետև վարակված են տատասկով (*Cardus nutans*), նրանք հարմարվել են վերը հիշված բարձունքների միջավայրի պայմաններին և ոչ միայն փչացնում են մեր արոտները, այլ նաև գցում են ոչխարի բրդի որակը: Հողերը վարակված են նաև թուխավոր խոտերով, որոնք անասունների թունավորման պատճառ են դառնում:

Կասկածից դուրս է, որ վերը հիշված արոտները պետք է բարելավվեն և գյուղատնտեսական օգտագործման մեջ դրվեն:

Մեր մի շարք տարիների փորձերի տվյալները, ինչպես նաև Սիսիանի շրջանի Սոցիալիստական Աշխատանքի Հերոսների (Բազարչայի Ստալինի անվան կոլխոզի նախագահ Ս. Ս. Ավետիսյանի, Բարձրավանի «Բեկում» կոլխոզի նախագահ Ա. Հ. Հովսեփյանի) կտավատի բարձր բերք ստանալու պրակտիկան, որոնք Մեծ Աղգարանի և Բիչանախի բարձունքներում մի շարք տարիներ շարունակ ստացել են յուզատու կտավատից 8—13 ցենտներ հատիկի բերք, այժմ էլ շարունակում են մշակել այդ կուլտուրան և ցույց են տալիս այդ կուլտուրայի մշակության անհրաժեշտությունը:

Դրանց բարձր բերքի ապրոտեխնիկան հանդում է հետևյալին. ցածր բերքատու արոտները հերկում են և թողնում ցրտահերկի տակ, գարնանը մեկ երկու երես փոցխելուց կամ ամենալավագույն դեպքում կրկնահերկ անելուց հետո վաղ ցանվող հացահատիկների հետ ցանում են կտավատի տեղական սլոպուլյացիա: Երբեմն կոկոնակալման-ծաղկման նախօրյակին մի անգամ էլ քաղհանում են: Այլպիսով, տարեց-տարի կտավատի բարձր բերք են ստանում, որով ապահովում են իրենց կոլխոզային անասնապահության պահանջը քուսպով և մզեղով, իսկ կոլխոզնիկներին էլ աշխօրի գիմաց բավականին բուսական յուղ են բաշխում:

Պրակտիկայի այդ նվաճումները հիմնավորվում են մեր մի շարք տարիների և հատկապես 1951—52 թվականների Բազարչայի Թափասի Դաշիքում գրված փորձի տվյալներով:

Աղյուսակ 1

Կտավատի աճի ֆազերը և նրա բերքատվությունը (Բազարչայ)

Ցանքի ժամկետը	Ծլում		Ծաղկում		ցողունների բարձրություն	հատունացում	բերքահատիք	բերք	մասկա տու	ժողովրդի տվյալներ
	սկիզբը	50- ս ավելին	սկիզբը	50- ս ավելին						
12/4	20/4	3/5	30/5	3/7	43—50	27/8	5/9	7—8	43,4	176

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից՝ վերոհիշյալ բարձունքներում յուզատու կտավատի, անգամ ուշահաս սորտերը ապահովում են

բարձր բերք, որովհետև նրանց լրիվ վեգետացիայի համար 100 օր կա վերհիշված միջավայրի պայմաններում:

Կտավատը կարող էր ավելի կարճ վեգետացիայի տևողության պայմաններում հասունանալ (ներառյալ սորոտերը հասունանում են 64 օրում): Վեգետացիայի այսպիսի ձգձգումը մեր փորձում բացատրվում է նրանով, որ ցանքի առաջին տարին խիստ անբարենպաստ էր գյուղատնտեսական մի շարք կուլտուրաների վեգետացիան, որոնց թվում նաև կտավատի համար: Մայիսի վերջերին, հունիսի սկզբներին տեղի ունեցավ քիմիական նյութի խիստ անկում—7,7 աստիճան ցուրտ և ձնաբեր փոթորիկ. 2 սմ և ավելին ձյան շերտով մի շարք օրեր ծածկվեցին կտավատի մատղաշ ծիլերը, որից նա չտուժեց: Այդ մի անգամ ևս հաստատում է կտավատի զարգացման առաջին փուլում նրա մեծ ցրտադիմացկուն լինելը: Նրան ստանձնապես չփեսացին նաև հուլիս-օգոստոս ամիսների տաք քամիների ազդեցությամբ օդի հարաբերական խոնավության անկումը (մինչև 13—15⁰/₁₀):

Հայտնի է, որ Հայաստանը ունի յուզատու կտավատի շատ վաղահաս սորտեր, որոնք ճանաչված են Համաժողովրդական Բուսաբուծության ինստիտուտի կողմից՝ ինչպիսիք են Ղուկտսյանի № 17 և Ուջանի մանրահատիկ կտավատը, որոնք հարմարվել են Հայաստանի բարձր լեռնային միջավայրի պայմաններին և հասունանում են 64—82 օրում: Այս սորտերը բարձունքներում մշակելիս մեծ խոնավության առկայության շնորհիվ տալիս են բարձր յուզատվություն (45 ⁰/₁₀), և բարձունքների ու առհասարակ Սուր-ալպյան գոտիների համար անգուգական են:

Բացի այդ Հայաստանի վերոհիշյալ բարձունքներում հացահատիկի ցանքը 2300 մ և բարձր մշակելիս հատկապես վաղ ցանքերի դեպքում խիստ տուժում են ժանգից (վելյուտինումը, Ուկրաինկան, սֆահատը և այլն), իսկ ուշ ցանքի դեպքում ենթակա են գարնան ցրտահարման:

Մի շարք տարիների փորձերը ցույց են տալիս, նաև, որ մոլախոտերից մաքուր ցրտահերկի վրա կտավատը վաղ ժամկետում ցանելիս, Հայաստանի բոլոր հողակլիմայական պայմաններում բերքի և յուղի անհամեմատ ավելի բարձր ցուցանիշներ է տալիս:

Աղյուսակ 2

Ցանքի ժամանակի գերը

Ցանքի ժամանակը	Բերքը ց/հ		Ցուղի ⁰ / ₁₀ -ը սեբմի մեջ	Սերմերի բացարձակ կշիռը գրամներով
	ցողուն	սերմ		
25/4	41,7	11,7	44,3	6,40
10/5	31,7	8,5	43,8	6,24
10/6	21,3	7,4	40,4	6,10
25/6	25,9	6,9	38,8	5,75

Սույն աղյուսակը նույնպես ցույց է տալիս կտավատի ցանքի մեծ էֆեկտիվությունը անասնաբուծության հիմնական շրջանների համար:

Կարևոր է նաև այն հանգամանքը, որ մեզ մոտ հնարավոր է կտավատի երկկողմանի օգտագործումը. այսինքն կարելի է ցանել այնպիսի սորտեր՝ ինչպիսիք ՎԻՐ-ի № 1658 կամ 1647, որոնք տալիս են թե՛ առատ

բերք և թե լավ որակի թել, Մեր փորձերի արդյունքներից, ավելորդ չենք համարում տալ նաև հետևյալ աղյուսակը:

Աղյուսակ 3

Կապատի յուղատու և մեծեւմոկ սորտերի փորձարկման արդյունքները

Սորտերի անունները	Հասունացումը օրերով	բերքը ց/հ		յուղի %-ը
		սերմ	թել	
Վիր № 1658	105	12,67	3,9	40,96
Վիր № 1647	105	10,7	5,4	41,20
Հուկասյանի № 17	82	10,9	1,64	42,79

Այս բոլոր ոչ լրիվ փաստարկումները հրամայողաբար պահանջում են կտավատը նորից կլոնտեսային արտադրության մեջ ներդնելու և միջոցներ ձեռք առնելու նրա սերմաբուծությանը կազմակերպելու և բարձր, կաշտն բերք ապահովելու համար, որը նույնպես կարևոր դեր կխաղա պարտիայի ու կառավարության որոշումները՝ երկրում առավել գործածական ապրանքների և սննդանյութերի առատություն ստեղծելը՝ կենսագործելու:

Ստացվել է 30—111—1953 թ.

А. А. Мурадян, Н. Г. Саруханян

К вопросу изучения возделывания льна-кудряша

Р е з ю м е

Обобщая опыт передовиков сельского хозяйства Сисианского и других районов и наши исследования по возделыванию льна-кудряша в высокогорной зоне, можно сделать следующие выводы:

1. Лен-кудряш с успехом может быть возделываем на высоте 2500 м над уровнем моря. Урожай его здесь в среднем составляет 8—13 цент. с гектара.

2. Возделывание льна-кудряша в высокогорьях дает возможность обеспечить скот высокоценными кормами—жмыхом, льняной мятой и саманом, а также получить растительное масло.

3. Переработка льна-кудряша может быть осуществлена на имеющихся установках в колхозах вышеуказанной зоны. Многие из них имеют льнамислобойные заводы.

4. Агротехника получения высоких урожаев льна проста и вполне доступна колхозам высокогорий, кроме того, целинные участки, возможные к освоению под посевы льна, таят в себе большие потенциальные возможности получения высоких урожаев, а рельеф местности большинства районов вполне допускает механизацию основных работ.